դունել պաշտօնակախմբի մեծաւորից պատուաւոր պաշտօնական յայտարարութիւնը։ Յետոյ անցնելով պետական իշխանաւորների կարգը Նոցին Մեծութիւնք բարեհաճեցին ընդունել աղ ու հաց քաղաքագլխից, երբ բաղդ ունեցաւ Նոցին Մեծութեանց ողջունել քաղաքի կողմից հետեւեալ ճառով՝

«Ձերդ Կայսերական Մեծութիւն ամենողորմած Թագաւոր, բազմացեղ ազգաբնակութիւնը հրճուանքով ողջունում է Ձեր Կայսերական Մեծութեանց գալուստը։ Մեր քաղաքը մանուկ է, բայց և աճում է անհաւատալի արագութեամբ. նա ինչպէս Նահանգական քաղաք՝ ընդ ամենն 29 տարեկան է, միայն վերջին 10 տարում նա աճել է այն չափով, որ այժմ արդէն նորա համար նեղ է նորան յանձնուած հողասահմանը։ Քաղաքի զարգացումը կապուած է նաւթարդիւնագործական զարգացման հետ, որը իւր հերթում, շատանում է միմիայն նրա համար, որ դուրս եկած նաւթը չէ արտահանվում սահմանից և մնալով տանը ամբողջովին այս տեղ մշակվում է։ Միմիայն այդ պայմաններում ինչպէս քաղաքի զարգացումը նոյնպէս և նաւթարդիւնագործութիւնը ունի փայլուն ապագայ։ Մեր քաղաքը նոր է, բայց նորա սիրտը արդէն ամրացել է և խիստ բաբախում է այն հաւատարիմ հպատակութեան զգացմունքներով, ինչպէս և հին քաղաքների սրտերը, որոնք Աստուծով հաւատացուած են Ձեր հարիւր միլիոնեան կայսրութեան։

«Բագու քաղաքը առ ոտս Ձեր Կայսերական Մեծութեանց աղերսում է և ամենահպատակօրէն խնդրում է ամենողորմածաբար ընդունել հաց և աղ իբրև սրտագին նուէր բնակչաց քաղաքիս»։

Նոցին Մեծութիւնք ողորմածաբար շնորհակալեցին քաղաքագլխին և անցան ձայնաւորների դասը։ Նահանգապետի ամուսինը արժանացաւ բաղդի մատուցանել Նորին Մեծութեան թագուհի կայսրուհւոյն տիկինների կողմից մի ծաղկեայ փունջիկ։ Նոցին Մեծութեանց արժանացան ներկայանալ տիկինները՝ Ղուկասեան, Մ. Լալայեան, Ձահգեդանեան, Փօնդեր – Նօնէ, Շչաստլիվցեվան, Փեյգել, Ա. Լալայեան, Կրասիլնիկեան,